ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ

2024 թ. հունիսի 21-ի թիվ 7 նիստի

Նիստն սկսելուց առաջ գիտխորհրդի նախագահ, դեկան Ն. Մարտիրոսյանը նշեց, որ մագիստրատուրայի «Հեռուստալրագրություն» կրթական ծրագրի ղեկավար Ն. Վարդանյանը հարգելի պատճառով բացակայել է նախորդ գիտխորհրդի նիստից: Հաշվի առնելով այդ հանգամանքը Ն. Մարտիրոսյանը առաջարկեց Ն. Վարդանյանի հաշվետվությունը ներառել օրակարգում և հաստատել այդ հավելումով: Գիտխորհուրդը բաց քվեարկությամբ, միաձայն հաստատեց օրակարգը:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- **Մագիստրատուրայի «Հեռուստալրագրություն» կրթական ծրագրի ղեկավար Ն. Վարդանյանի հաշվետվությունը:**

Ն. Վարդանյանը ներկայացրեց ծրագրի մեկ տարվա գործունեության ընթացքը՝ ընդգծելով, որ Հանրային հեռուստաընկերության հետ փոխգործակցությամբ նախորդ տարի մեկնարկած ծրագիրը դուալ կրթության մոդել ձևավորելու փորձ էր, այն է՝ համալսարանում գծագրած կրթական գործընթացները շարունակել ու ավարտել մեդիաընկերությունում և հակառակը, ինչը պահանջում է տեխնիկական և մարդկային հավելյալ ռեսուրսների ներդրում թե՛ լրատվամիջոցում, թե՛ ֆակուլտետում: Ծրագրի ղեկավարը նշեց, որ հենց այս տիրույթում են գրանցվել հիմնական հաջողություններն ու նաև խնդիրները. վերջիններիս շուրջ քննարկումներն ու լուծման ուղիներ կիրառելը նոր ուստարվա մեկնարկին ընդառաջ ավարտվում են: Ֆոկուս-խմբային քննարկումներն ու հարցումները ցույց են տալիս, որ հիմնական դժգոհությունները կապված են պրակտիկ միջավայրն առավել ակտիվ դարձնելու հետ. թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների համար կարևոր է իրական/աշխատանքի վրա հիմնված կրթական պրոցեսներ իրագործելու համար տեխնիկական միջոցների բավարար հագեցվածությունը, ինչը թույլ կտա լիարժեքորեն իրականացնել հեռուստաարտադրական գործընթացները: Այնուհանդերձ, ծրագրի մասնագիտական առարկայացանկի երկու ծավալուն դասընթացների ավարտին ուսանողները պատրաստել են խոշոր նախագծեր՝ նախարտադրական փուլն իրականացնելով ֆակուլտետում, իսկ արտադրական և հետարտադրական փուլերը հիմնականում Հանրային հ/ը տաղավարներում՝ պրոֆեսիոնալ թիմի աջակցությամբ: Ուսանողները պատրաստել և նկարահանել են ուշագրավ ձևաչափի հարցազրույց «Առավոտ լուսոյի» տաղավարում և լրատվական-

վերլուծական հաղորդման մեկ թողարկում «Երևանյան նյուզռում» դասընթացի շրջանակում: Տեսանելի հաջողություններ, ըստ ծրագրի ղեկավարի, գրանցվել են հենց այս նորարարական դասընթացի՝ «Երևանյան նյուզռումի» շրջանակում. սիմուլյացիոն մեթոդով կառուցված դասընթացի նպատակը հեռուստատեսային նյուզռումային միջավայր մոդելավորելն ու տարբեր դերերում աշխատելն էր: Ն. Վարդանյանը հավելեց, որ մյուս բոլոր դասընթացների շրջանակում ևս ուսանողները հանդես են եկել մեծ ու փոքր նախագծերով, որոնք իրականացրել են թե՛ ֆակուլտետում, թե՛ խմբագրություններում:

Ծրագրի իրականացման ճանապարհին աշխատանքային թիմը կարևորել է պլանավորումն ու կրթական քարտեզների խորքային ուսումնասիրությունը, ինչի արդյունքում հաջողվել է ստեղծել պրակտիկ և հետազոտահեն կրթական միջավայր, որտեղ ուսումնառությունը կազմակերպվել է ակտիվ, համագործակցային մեթոդաբանությամբ, ինչը համաշխարհային կրթական գործընթացների հիմնապյուներից է այսօր ու «Հեռուստալրագրություն» ծրագրի ռազմավարական նպատակների մեջ առաջնահերթություն է եղել մշտապես: Ըստ ծրագրի ղեկավարի՝ հետազոտահեն միջավայր կառուցելը ևս ծրագրի կարևոր նպատակներից է: Ի սկզբանե նախատեսված է եղել միջգիտակարգային թեզերի ու առանձին նախագծերի իրականացում: Արդյունքում, Սոցիոլոգիայի ու Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետներում գործող՝ համապատասխանաբար «Հասարակայնության հետ կապեր» և «Ընտանիքի հոգեբանություն» կրթական ծրագրերի հետ հաստատվել է երկու թեզի թեմա: Ավելին՝ միջգիտակարգային թեզի հեղինակներն ու գիտղեկավարները դիմել են ԵՊՀ-ում հայտարարված միջգիտակարգային թեզի կատարման դրամաշնորհային մրցույթին և հաղթանակ գրանցել:

Ն. Վարդանյանը նկատեց, որ այս փուլում ծրագիրն անցնում է ինքնատիպ փորձաքննական շրջան՝ BBC Media Action-ի հետ համագործակցության շրջանակում: Բրիտանացի գործընկերների հետ ծրագիրը դիտարկվում է տարբեր բաղադրիչների մակարդակում՝ դասընթացների բովանդակային ու ձևաչափին առնչվող հիմնահարցերից մինչև մեթոդաբանություն և դասընթացների մշակման տեխնիկաներ: Հատկանշական է, որ առարկայացանկի կարևորագույն ուղղություններից մեկը՝ մերօրյա բազմապրոֆիլ մեդիառլորտում պատմասության՝

սթորիթելինգի առաջավոր փորձի վրա շեշտադրումը, BBC Media Action-ի գործընկերները բարձր են գնահատել:

2023/2024 ուստարում «Հեռուստալրագրություն» ԿԾ ընդունվել և ավարտել է 15 ուսանող (ի սկզբանե եղել է 19 հայտադիմում): Ամփոփիչ ատեստավորման արդյունքները գերազանց են (18-20 միավոր): 15 ուսանողից 5-ն ավարտել են ծրագիրը գերազանց առաջադիմությամբ, 10-ը՝ լավ:

«Հեռուստալրագրություն» ծրագիրն ավարտել է նաև Արցախից տեղահանված մեկ ուսանող՝ սկզբնական շրջանում առցանց, սեպտեմբերի 12-ից՝ առդեմ: Ծրագրում ուսանել է նաև Չինաստանից (քաղաք Չժենչժոու) մեկ ուսանողուհի: Երկուսն էլ գրանցել են բարձր առաջադիմություն (գերազանցությամբ ավարտած ուսանողների շարքում են):

Ղեկավարը շեշտեց, որ ծրագրի ու դրանում ներառված դասընթացների վերջնարդյունքների մշտադիտարկումն ու առարկաների թարմացումն այս փուլում գրեթե ավարտվել են: Առարկայացանկում ներառվել է «Մասնագիտական հաղորդակցություն (անգլերեն)» առարկան (նախկին՝ «Մասնագիտական օտար լեզու («անգլերեն)» առարկայի փոխարեն), որի շրջանակում առավել տեսանելի տեղ կտրվի օտար լեզվով հաղորդակցվելու հմտությունների զարգացմանը և մեքենայական ուսուցման համակարգերի ակտիվ կիրառման պայմաններում թարգմանչական աշխատանքի առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Երկու դասընթացի շրջանակում նախատեսվող բովանդակային փոփոխությունները ևս մտել են ավարտական փուլ: Փոփոխությունները, մասնավորապես, վերաբերում են դասընթացներից մեկում՝ արհեստական բանականության, մյուսում՝ ռեսուրսների ճիշտ կառավարմանն ուղղված թեմատիկ շրջանակների ընդլայնմանը:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Գ. Մ. Աբրահամյան, Ա. Ռ. Մենեմշյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ «Հեռուստալրագրություն» կրթական ծրագրի ղեկավարի աշխատանքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- **Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի վարիչ Դ. Պետրոսյանի հաղորդումը Սանկտ Պետերբուրգի պետական համալսարան կատարած աշխատանքային այցի մասին:**

Դ. Պետրոսյանը տեղեկացրեց, որ այս տարվա մայիսի 28-ից հունիսի 2-ը մասնակցել է Ս. Պետերբուրգի Ժուռնալիստիկայի ֆակուլտետի և Ռուսաստանի քրիստոնեական հումանիտար ակադեմիայի համատեղ կազմակերպած Սվյատոտրոիցկյան ակադեմիական ընթերցումներ (Свято-Троицкие академические чтения) գիտաժողովին՝ բանասիրություն, ժուռնալիստիկա թեմատիկ ոլորտներով, որտեղ հանդես է եկել երկու զեկուցմամբ:

Դ. Պետրոսյանը նշեց, որ հանդիպումներ է ունեցել կոնֆերանսի կազմակերպիչ պրոֆեսոր Օլգա Բոգդանովայի, Սանկտ Պետերբուրգի համալսարանի Ժուռնալիստիկայի բարձրագույն դպրոցի ներկայացուցիչներ պրոֆեսորներ Սերգեյ Կորկոնոսենկոյի, Նատալյա Ցվետովայի, բ. գ. դ., , դոցենտ Անաստասիա Գրիշանինայի և ուրիշների հետ: Քննարկվել են ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի և Ս. Պետերբուրգի բարձրագույն դպրոցի համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր:

Դ. Պետրոսյանը նշեց, որ գիտաժողովի ընթացքում ռուս գործընկերների կողմից իրեն առաջարկ է եղել ներգրավվել որպես Ս. Պետերբուրգի ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտական կոչումներ շնորհող մասնագիտական խորհրդի արտասահմանյան անդամ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Գ. Մ. Աբրահամյան, Ա. Ռ. Մենեմշյան, Ջ. Ջ. Սարգսյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.-**Ժուռնալիստիկայի ֆակուլտետի հիմնադրման 25-ամյակի նախապատրաստական աշխատանքների մասին Ն. Մարտիրոսյանի, Դ. Պետրոսյանի և Գ. Աբրահամյանի հաղորդումը:**

Ն. Մարտիրոսյանը նշեց, որ ս/թ հոկտեմբերի 1-ին լրանում է ֆակուլտետի հիմնադրման 25- ամյակը: Միջոցառումների շարքում նախատեսվում է գիտաժողով: Կհրատարակվի «Ժուռնալիստիկա և հաղորդակցություն» գիտական ժողովածուն: Դեկանը ներկաներին առաջարկեց միասին կազմել և քննարկել նախատեսվող

միջոցառումների շարքը՝ նշելով, որ առաջիկա շաբաթվա ընթացքում սպասում է առաջարկությունների:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Դ. Վ. Պետրոսյան, Գ. Մ. Աբրահամյան, Ա. Մ. Մարտիրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- «Ժուռնալիստիկա և հաղորդակցություն» գիտական ժողովածուի 5(17) պրակը հրատարակության պատրաստելու մասին Դ. Պետրոսյանի հաղորդումը:

Դ. Պետրոսյանը նշեց, որ «Ժուռնալիստիկա և հաղորդակցություն» գիտական ժողովածուն հրատարակելիս պետք է առաջնորդվենք ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականության մասին նոր կարգով, որը նոր պահանջներ է առաջադրում (Երևանի պետական համալսարան հիմնադրամի գրահրատարակչական քաղաքականության մասին 2022թ. նոյեմբերի 24-ի որոշում, հավելված 2. գիտական հոդվածների մասին, էջ 11-14): Իսկ պահանջների կատարումը լուրջ և ծավալուն աշխատանք է ենթադրում, որը ոչ թե մեկ անհատի, այլ խմբի անելիք է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Գ. Մ. Աբրահամյան, Ա. Շ. Ավետիսյան, Ա. Ռ. Մենեմշյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Զ. Զ. ՍԱՐԳՍՅԱՆ